

## ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### Բ. ՄԱՏԵԱՆԻ ՔՆԱՐԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ

Կեցութեան ողբերգականութիւնը Նարեկացին ընկալում է որպէս սեփական ողբերգութիւն: Նրան ցնցում է խախտուած Աերդաշնակութիւնը՝ լինի զգացմունքների ու գիտակցութեան մէջ, բնութեան երեւոյթներում, թէ տարրերի համամասնութեան մէջ եւ հասարակական կեանքում: Ողբերգութեան ծանրութեան կենտրոնը, այսպիսով, իրականութեան մէջ է, երկրային ոլորտում եւ ոչ թէ նրանից դուրս: Ներհակ ուժերից ծնուած այդ ողբերգութիւնը ոչ միայն իրական է ու ճշմարիտ, այլև յաւիտենական է եւ համամարդկային: Նարեկացու առաջին իսկ պահատանքներից մէկը կեցութեան այդ ողբերգականութիւնից ազատագրու ելու աղերսանքն է, ուր ամէն մի տող, ծաւալելու դեպքում, կը դառնար առանձին դրամայի հիմք ու հենք:

Մի եղեց անպտուղ ի փոքր վաստակոյս՝

Իրը ապաչան սերմանող անբերի երկրի:

Մի լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել,  
Ողբալ, եւ ոչ արտասուել,  
Խորհել, եւ ոչ հառաջել,  
Ամպել, եւ ոչ անձեւել,  
Ընթանալ, եւ ոչ հասանել,  
Ինձ ձայնել, եւ ֆեզ ոչ լսել,  
Պաղատիլ, եւ անտես մնալ,  
Կողկողիլ, եւ ոչ ողորմիլ,  
Աղաչել, եւ ոչ ինչ աւգտել,  
Զոհել, եւ ոչ նեններել,  
Զինակ տեսանել, եւ դատարկ ելանել:

(Բան Բ, գ)

Հակադրութիւնների այս ձեւը ոճի խնդիր չէ, այլ ինքնադրսեւորման պահանջ: Եւ Նարեկացին յանախ է դիմել այդ եղանակին: Մատեանը հակադրութիւնների միասնութիւն է՝ ինքնածաղկման ցածրակետից մինչեւ մարդու աստուած ացման բարձրակետը: Հակասութիւնները կարող են հալուել ու ծուլուել լոկ աստուած ային սիրոյ քուրանների հրում: Մինչ այդ հերոսին մնում է տառապանքը, մաքրուելու համար եռալու տեղատուութիւնն ու մակրնեացութիւնը:

Իրը ի քրայս ընտրութեան փուրոյ քոյ սիրոյ՝

Հանապազ եռամ եւ ոչ երբեք մարզիմ,  
Միշտ խառնիմ զուգիլ եւ ոչ եւս  
միանամ:

(Բան ԿԹ, ա)

Սա զուտ գեղեցիկ խօսք չէ, այլ բանաստեղծի ներաշխարհի բնական անդրադարձը: Մենքը մաքրում է զղչման արցունքով, ինչպէս ժանգը՝ հրով: Հանգիստ կարող է լինել միայն աստծու հետ գտած հաշտութեան մէջ, իսկ այդ վախճանակետին հասնելու համար պիտի անդուլ բարձրանալ՝ հոգեպէս լուսաւորուելով: Ամէն ինչ գեղեցիկ է գեղեցիկ նպատակի յարաբերութեամբ: Մոմը կոչուած է լոյս տալու: Այն պիտի վառուի, այրուի, սպառուի, լոյս դառնայ եւ որքան շոայլ՝ այնքան գեղեցիկ: Հոգին կոչուած է աստուածանալու: Նա պէտք է յաղթահարի մեղքի դիմադրութիւնը, ինչպէս բոցը՝ մոմի նիւթը: Դիմադրութեան յաղթահարման այդ ընթացքը Նարեկացու համար տիեզերական երեւոյթ է, եւ ամէն ինչ իր մէջ ունի թէ իր խաւարը եւ թէ իր

լոյսը: Պատահական չէ, որ Նարեկացին յաճախ է դիմում ծովի պատկերին՝ իր հոգու խոռվեները առարկայօրէն ցոյց տալու համար: Փոքորիկը մաքրում է ծովը, տառապանքը՝ հոգին: Կեանիքը ծով է, մարմինը՝ փոքորիկի մատնուած նաւակ, որի մէջ ալիքների անվերջ գրիներից տատանում է հոգին: Զարգացնելով պատկերը՝ Նարեկացին ալետատանութիւնից անցնում է ալեկոնութեան, նաւակից՝ նախն, տագնապած երերալուց՝ յանկարծահաս խորտակմանը: Իր յոյսը նա դնում է երկնային բարի նահապետի վրայ՝ վերստին նորոգուելու եւ երկնային խաղաղ հանգրուան հասնելու համար: Պահի յարաբերութեամբ, սակայն, փոքորիկն ու նաւարեկութիւնը անցեալ են, յոյսը՝ հեռանկար, մինչդեռ իրականը խորտակուած հոգին է, որ «ողորմագին բաղծանաւէ հեծէ» (Բան ԽԵ, գ):

Քնարական հերոսի ողբերգութիւնը միայն իր մէջ չէ, իր եւրիւնից: Նրա բարոյական անկման մէջ մեծ տեղ ունի հասարակական միջավայրի արտաւորութիւնը: Նարեկացուն յատուկ է քննադատական թեժ կիրքը: Նրա ատելութեան եւ սիրոյ նժարները զուգակոռում են իրար, բացասականի մերժման ուժը համարժեք է դրականի հաստատման նրա ուժին: Նա վարաբետօրէն է գծել ժամանակի հասարակութեան բոլոր դասերի ու դիրքի մարդկանց պատկերասրահը՝ մարգարէի անշառութեամբ նշանակելով նրանցից հրաքանչիր արատն ու ապականութիւնը՝ իրբեւ սեփական անձի այլակերպութիւն: Զկայ մէկը, որ բարձր լինի իր դիրքից՝ իրբեւ մարդ: Նրանից ամէն մէկը ներկայացնում է սեփական պարտաւորութեան յեղաշրջուած պատկերը: Մշակը ծոյլ է, մարտիկը՝ անպատրաստ, պահապանը՝ մատնիչ, խորհրդատուն՝ նենգ, պատուիրակը՝ բանագանց,

գանձապահը՝ երկմիտ, առաքեալը՝ խոռվարար, իշխանը՝ տիրադաւ, արքան՝ տարագիր, բագաւորը՝ անարգ, կայսրը՝ հոգեկործան, դատաւորը՝ աչառու, զօրավարը՝ զրկող, քահանան՝ անարժան, պաշտօնեան՝ հարրեցող, վաճառականը՝ շուայտ, հարեւանը՝ չարախոս, բարեկամը՝ գժուուած, հարուստը՝ ժլատ, աղքատը՝ հպարտ: Ո՞ր մէկը բուևս: Ինչպէ՞ս կարող է այդ բոլորը մտածող մարդու համար, առաւել եւս զգայուն բանաստեղծի համար չդառնալ մշտական երկիրի, ցաւի ու հոգի, տագնապի ու զգուանքի պատճառ ու առիթ: Այլազան ապրումների այդ համապատկերը՝ Նարեկացին տալիս է մանրամասների մի համադրութեամբ, ուր քննարական հերոսի մէջ յառնում է բոլոր ժամանակների մարդը՝ հոգու յարատեւ տագնապով ու տուայտանելով.

Եթէ զինուոր տեսանեմ՝ մահու ակն ունիմ,

Եթէ պատգամաւոր՝ խստութեան,

Եթէ մասնագէտ՝ մուրիակի կորստեան,

Եթէ աւրինաւոր՝ անիծից,

Եթէ աւետարանական՝ փոշոյ ոտիցն բաւրափելոյ,

Եթէ բարեկրաւ՝ յանդիմանութեան,

Եթէ ապառում՝ կակծման:

(Բան ԽԳ, գ)

Կարելի՞ է արդեօֆ լաւ բան յուսալ այդ հասարակութեան մարդուց: Ու՞մից կարելի է յուսալ փրկութիւն: Ու՞մ կարելի է դիմել՝ հարազատի՞ն, որ մատնուած են նոյն ցաւ ու դաւին, իշխանների՞ն, որոնց բարիքներն անցաւոր են իրենց նման, թէ՞

Առ բագաւորութիւնս աշխարհի արդեաւ,

Որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն, բան զկենագործեն:

(Բան ԾԱ, ա)

Եւ բնական է, որ Նարեկացին դիմէր Աստծուն եւ աղերսախառն պաղատեր-

Հայեա'ց, տէր, ողորմութեամբ ի  
պատկեր վշտաց դասնութեան  
թագմավտանգ կրիցս կարեաց, զոր  
հանդէպ քո տարածանեմ,  
Կցորդակից լեր քժշկապէս,  
Եւ մի ի խոյզ ընտրութեան կոչեր  
դատաւորաբար:

(Բան ԻԳ, թ)

Թւում է՝ այստեղ պիտի աւարտուէր  
հերոսի ողբերգութիւնը, սակայն այս  
անգամ էլ նա ալեկոծւում է այն  
գիտակցութիւնից, որ Քրիստոսն աշխարհ  
էր եկել իր փրկութեան համար, տառապէլ,  
անարգուել, փշէ պսակ ընդունել, խաչուել  
ու արիւն էր հեղել, մինչդեռ ինքը  
փոխանակ հետեւելու նրան, հայեացքը  
յառելու երկնքին, ընդհակառակը,  
«անասնական գետնաքարշութեան սողոնյ  
սահեցմամբ կամաւ» (Բան ԼԲ, թ) հակուել  
է երկրին եւ երկրայիննին: Նա գիտէ, որ  
Աստուած մարդուն ստեղծել է կատարեալ,  
նրան օժտել է հինգ զգայարաններով,  
բանականութեան ձիք է պարգևել, որ նա  
իմաստասիրաբար նանաչէր իր արարչին,  
մինչդեռ ինքը, անապատի ցիոների նման  
կորացել է դեպի երկիր.

Ով յիմար, զիա՞րդ քեզէն կորացար  
յերկիր,

Զաստեացս միշտ հոգացեալ  
դիպուածս՝

Ընդ ցիոս անապատականս  
համարեցար:

(Բան ԽԶ, թ)

Զոպանեան իրաւամբ նշել է, թէ  
Մատեանում կան «էջեր, ուր Շեխսպիրի  
հով մը կ'անցնի» (8): Եւ իսկապէս,  
Նարեկացին եւ Թեխսպիրը մօտենում են  
իրար՝ մարդու նկատմամբ ունեցած իրենց  
հայեացքներով: Նարեկացու հերոսը ողբում  
է, որ օժտուած լինելով բանականութեամբ՝  
ինքը դասուած է անասունների շարքը  
(«Եւ ի բանականութեանն՝ ընդ անասունս  
դասակարգեալ, Եւ զազիր գարշութիւն՝

ընդ գոյութեանն շարամանեալ» – Բան ԻԳ,  
թ): Շեխսպիրի հերոսը՝ Համլետը, նողկում  
է մարդուց, որ «Խոհականութեամբ կար-  
ծես մի Աստուած», իրականում սակայն  
դարձել է միայն իր կրթերի գերին՝  
«Անասուն միայն, ոչինչ աւելի»(9):

Անտարակոյս, նա, որ մեզ ստեղծեց  
այս լայն հանճարով,

Դեպի ետ նայող եւ դեպի առաջ,  
Զպարգեւեց մեզ այնպիսի մի մեծ  
ընդունակութիւն

Եւ աստուածանման բանականութիւն,  
Որ նրանք անպէտ բորբոսնեն մեր  
մէջ(10):

Մարդն արժանի չէ իր կոչմանը:  
Նարեկացու համար մեղքն է, որ խախտել  
է նրա ներդաշնակութիւնը եւ նա  
տարութերում է անվերջ չարի եւ բարու  
հակամարտութիւնից եւ քանի դեռ չի  
փարուել Քրիստոսի իդեալին՝ պիտի լինի  
բարոյապէս բերի ու թշուառ: Շեխսպիրի  
համար մարդու բարոյական նկարագիրը  
աղնատուած է մարդու յարաբերութեամբ:  
Նա այն չէ, ինչ բուում է: Ողբերգութիւնը  
ծնւում է իրականութեան մէջ հումանիստական իդեալի հաստատման  
անհնարինութիւնից:

Մարդկային հոգու իր  
նանաչողութեամբ Նարեկացին հասնում է  
հոգերանական այնպիսի  
բացայայտումների, որոնք իրենց  
համամարդկային նկարագրով նրան  
դարձնում են սերունդների յաւիտենական  
ուղեկից: Նրա Մատեանը ինքներգութիւն  
չէ, անձնական նակատագրի ողբերի երգ  
չէ, սակայն քնարական հերոսի  
անհատականութեան գծման մէջ ապշեցնում  
է Նարեկացու ապրումների, յոյզերի եւ  
զգացմունքների անձնամետ հնչերանքը:  
Մարդկային ներաշխարհի բարդ ծալքերը  
նա ներկայացնում է իբրև սեփական  
էութեան արգասիք: Կամենալու եւ  
կարենալու, ցանկութեան եւ նրա

իրականացման միջեւ ընկած է պայքարի ու մաքառման մի դժուարին նանապարհ՝ պայմանաւորուած մի կողմից մարդու իր իսկ բնութեամբ, միւս կողմից՝ հասարակական միջավայրով:

Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս,

Ցանչափն ձգտի՝ իմոյն ոչ հասի,

Ի մեծագոյնն ամրառնալ՝ աստուստ գլորեցայ,

Ցերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ,

Ի զգուշանալն առաւել՝ յաւետ վնասեցայ,

Ցանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ,

Կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաջն գրեցի,

Ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի,

Ի խնդիր սակաւում՝ ի կարեւորացն գրկեցայ,

Ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի,

Առ սովորութեանն կտրիլ՝ կորուսիչն գտի,

Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ,

Զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝

Չարաչար դատախազ անձին կարգեցի:

(Բան ԾԵ, զ)

Այստեղ ամէն մի տող կարող է հնչել իրեւ թեւաւոր ասոյր: Հազուագիւտ վարպետութեամբ նարեկացին ջնջում է դարերի անջրապետը: Նրա քնարական հերոսի ապրումները համահնջուն են այժմէականութեանը, այսօրուայ ապրումներին: Խոհա-փիլիսոփայական ընդգրկման լայնութեանն այստեղ ներդաշն է խօսի յուզական եղերերգական շնչին: Քնարական հերոսի հոգին ալեկուտում է յարատեւ խոռվից: Դա չարի դէմ մաքառող բարու մաքրող ուժն է, որ ծաւալութեալ

բանաստեղծի յոյզերից՝ համակում է ընթերցողին:

Նարեկացու խօսքը հիմնականում ուղղուած է Աստծուն, իրականում՝ մարդուն: Այն ամէնը, ինչ գեղեցիկ է ու վեհ, նա մարմնաւորում է Աստծու՝ որպէս մարդկութեան յաւիտենական իդեալի մէջ: Քնարական հերոսի ձգտման բարձրակշն էլ այլ բան չէ, քան աստուածանալ, Աստուած իսկ դառնալ: Բայց դա միայն մարդու նպատակը չէ, այլև հենց Աստծու: Աստուածորդու՝ Քրիստոսի առաքելութիւնը իմաստաւորուած է հենց այդ խորհրդով՝ մարդուն ցոյց տալ նրա սատուածանալու ուղին: Արարածի թերութեան համար նարեկացին պատախանատու է համարում նաև Աստծուն: Նա չի կարող մոռանալ մարդուն եւ իր սիրուց ու շնորհներից զրկել նրան: Երէ մարդը բարոյապէս կատարելագործութեալ մօտենում է Աստծուն, ապա Աստուած իր հերթին մօտենում է նրան: ՉԼ<sup>ո</sup> որ Աստուած բնակում է հենց արդարների հոգում: Մարդը Աստծու տանարն է, ինիգնը՝ աստծու ներկայութիւնը: Աստծուն չի կարող է փնտուել այլ տեղ, քան մարդու մէջ, նրա հոգու պատկերի մէջ: Եւ բանաստեղծը համոզուած է, որ մօտենալու եւ լոյսին մերձենալու այդ նանապարհին կայ այն ըդալի պահը, երբ մարդը կարող է հասնել իր իդեալին, ճուրուել նրան, դառնալ մի եռթիւն, մի անմահ ու աստուածային բնութիւն:

Միստիկական այդ գաղափարն է, որ դարեր շարունակ սերմանել է Քրիստոնէական վարդապետութիւնը: Այս գաղափարը, սակայն, ունի նաև իր բանական եւ զուտ մարդկային բացատրութիւնը: «Մարդը դեռ չգիտեր - զրել է էնցիսը - որ ինքը երկրպագում է իր սեփական եռթեանը եւ աստուածացնում է այն իրեւ մի ինչ-որ օտար եռթիւն»(11): Այս, նարեկացին չէր կարող

մտածել, թէ ինքը երկրպագում է մարդկային օտարուած էռութեանը։ Նրա համար գերագոյն գոյը Աստուած է։ Բայց նա հաւատում է, որ մարդը կարող է հասնել իր աստուածային իդեալին, կարող է աստուածանալ։ Նարեկացին աստուածային վեհն ու կատարեալը փոխանցում է մարդուն եւ մարդու մէջ գեղեցիկը, նշանարիտը, բարին ու արդարը քարձրացնում է աստուածայինի աստիճանի։ Խոստվանելով մարդու մեղքերը, նա ճգտում է լուսաւորել հոգին, աստուածային շնորհների արժանանալ՝ կատարելագործուելու եւ աստուածանալու համար։ Կատարելութեան ճգտման այդ անվերջ ուղին միայն իր երազանքը չէ, այլեւ համայն մարդկութեան։ Եւ սրբազն մի երկիւղածութեամբ ու հպարտ արժանապատուութեամբ քանաստեղծ դիմում է Աստծուն։

Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանաւր,

Ցիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝  
Աստուած իսկ լինել ընտրութեամբ  
շնորհին

Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի  
մարմնոյդ ճաշակմամբ

Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ . . . (Բան ԾԲ, գ)

Աւելի հեշտ է զգալ Նարեկացուն, քան մեկնարանել։ Աստուածանալու այս գաղափարը յատուկ է միայն միշնադարին։ Նա տեղ չունի ոչ անտիկ եւ ոչ էլ Վերածնութեան դարաշրջանի գրականութեան եւ արուեստի մէջ։ Նարեկացու քնարական հերոսի ներաշխարհի քացայատման պարուս խտացուած է մեղքի գիտակցման, զղման եւ քաւելու ճգտման մէջ։ Նարեկացին արբնացնում է մարդու խիդելը, քացում է նրա հոգու աչքը՝ սեփական հոգու, հետեւարար եւ մարդկութեան հոգու, պատկերն ու եռութիւնը տեսնելու եւ

զգալու համար։ Կատարելութեան հասնելու այս ուղին անհատի համար սահմանափակուած է կեանքի տեւողութեամբ, բայց յարատեւ մարդկութեան համար։ Մարդկային քարոյական կատարելագործման այդ ճգտումը նարեկացին քանաձեւում է դարի կրօնափիլիսոփիայական ոգով։

Ցուս'ա յԱստուած, խոստվան լեր նմա, եւ նա հոգայ վասն քո։ (Բան ԽԴ, թ)

Նարեկացու այդ հաւատը ներթափանցուած է կատարեալին հասնելու անբեկանելի յոյսով։

Տաւենե'ա զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ . . . (Բան ԽԸ, ա)

Նարեկացուն պէտք է հաղորդակցուել նրա անմիջական ու յուզական քանաստեղծականութեան ընկալմամբ։ Կրօնաստուածարանական, վերացական, միստիկ խորհրդածութիւնների շերտը աւելի շուտ պատկանում է նարտասանութեան եւ քարոզի, քան քանաստեղծութեան ոլորտին։ Անհենարին է կարդալ Նարեկացուն եւ չհամակուել ինքն իրենից քարձրանալու, ազնուանալու, գեղեցկանալու վսեմ խոհերով եւ զգացմունքներով։ Նարեկացին մեծ ագոյն հումանիստներից մէկն է համաշխարհային գրականութեան մէջ։ Անսպառելի է նրա ստեղծագործութիւնը, եւ իր իդեալի նման նա սերունդների համար պիտի լինի ու մնա'.

Անմատչելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր (Բան ԽԳ, ա)

Խոր ու տեսական է եղել Նարեկացու ազդեցութիւնը։ Զկայ հայ նշանարիտ մի քանաստեղծ, որին դիպած չլինի նրա հանեարի լոյսը։ Բաւական է ասել, որ ոչ մի հայ գրող հայոց լեզուի հարստութեանը չի տիրապեսել այնպէս, ինչպէս Նարեկացին։ Ոչ մի հայ գրող չի հասել համամարդկային նրա ընդգրկման

լայնութեանը, խորութեանը եւ քարձութեանը: Թէեւ իր քարոյական անկատարութեամբ մարդը հակադրուած է Աստծուն, սակայն նարեկացու Մատեանում հաւատի ու կասկածի, յոյսի եւ յուսահատութեան, սիրոյ եւ ներման բոլոր փորձառութիւնների միջով անցնում է մարդու քարոյական ինքնակատարելագործման եւ Աստծու հետ միաւորուելու, աստուածանալու գաղափարը:

Երկարատեւ ու քարդ է եղել հոգեւոր եւ աշխարհիկ գրականութեան սահմանազատման ընթացքը: Նարեկացին այդ սահմանարաժանի մեծագոյն դեմքն է հայ գրականութեան պատմութեան մէջ: Եւ որքան էլ զարմանալի՝ նա մնաց անըրկնելի եւ չգերազանցուած: Նրա բնարական հերոսի մէջ մարմնաւորուած է ոչ միայն դարաշրջանի մարդը՝ իրրեւ հաւաքական անհատականութիւն, այլև բանաստեղծի կերպարը՝ իրրեւ նոր ձեւաւորուող անձնաւորութիւն: Նարեկացու համար որքան կարեւոր է, թէ ինչ է աշխարհն իր համար եւ ինքը՝ աշխարհի, նոյնքան էլ կարեւոր է, թէ ինչ է Աստծուած իր համար եւ ինքը՝ Աստծու: Մատեանի միասնութեան առանցքը կազմում է մարդու ինքնակատարելագործման եւ հոգու փրկութեան գաղափարը: Նարեկացու հանճարը սակայն ընդգրկել է իր դարաշրջանի գեղարուեստական համապատկերը: Նա խորապէս գիտակցել է իր Մատեանի խորհուրդն ու նշանակութիւնը: Ժամանակի ըմբռնմամբ՝ այդ իմաստն ու խորհուրդը հանգում էր մարդու աստուածանալուն, նոր ժամանակների իմաստաւորմամբ՝ մարդու մէջ մարդկայինի յաղթանակին եւ նրա քարոյական վերափոխմանը: Մեղքի խաւարը հոգուց վանելու եւ աստուածային կատարելութեան լոյսին ձգտելու քարոյագիտական հայցակտից Գրիգոր Նարեկացուն գուգահաւասար է միայն Ալիգիերի Դանտեն:

ԱՂԲԻՒՄՆԵՐ ԵՒ ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 8.- Ա. Զոպանեան, Երկեր, էջ 272:
- 9.- Վ. Ծեխսպիր, Ընտիր Երկեր, Երեւան, 1964, հ. 1, էջ 63, 124:
- 10.- Նոյն տեղում, էջ 124:

Աւելորդ չեմ համարում գուգադրել Երկու հատուած՝

**ՆԱՐԵԿԱՑԻ.** Ահա ի ի յոտս տանողական Կրողաց Երկուց միակցորդ խորհրդականաց, Ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար, Երբ ի բոլիչս բեւոց կրկնարար քազկաց վերատանողաց՝

Յաշխարհն հայրենական հայել. Ով յիմար, զիա՞րդ բեզեն կորացար յերկիր Զաստեացս միշտ հոգացեալ դիպուածն՝ Ընդ ցիոս անապատականս համարիցար: Երբ զերագ քազմարերանեան ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն,

Զի եւ այսու ի յաւրիմակէն շնորհէ մի աւտարացիս:

Զաստուած տեսանել եւ զմնացականացն իմաստասիրել:

(Բան ԽԶ, թ)

**ՆԵՐԱՊՈՒՐ.** Ինչ հրաշակերտ է մարդը: Որչափ ազնիվ է նրա դատողութիւնը: Որչափ անսահման են նրա ընդունակութիւնները: Կազմուածքը եւ շարժումը որչափ քարեձեւ եւ հիանալի: Կաց ու նիստով կարծես մի հրեշտակ: Խոհականութեամբ՝ կարծես մի Աստծուած: Աշխարհի գեղեցկութիւնը: Կենդանիների կատարելատիպը:

(«Համեստ», արար 2րդ, տեսարան 2րդ)

11.- Կ. Մարքսը եւ Ֆ. Էնգելսը արուեստի մասին, հ. 1, էջ 558:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ  
(Հարունակելի)